

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2015 Թ. ՆՂԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը ֆակուլտետում (զեկ. Ա. Սարգսյան):
2. Մանկավարժության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
3. 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցիալական արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 25-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 4-րդ նիստի օրակարգը:

1-ին հարցի առիթով արտահայտվեց դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես նշեց, որ ֆակուլտետում 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներն ընթանում են բնական հունով. քննական գրաֆիկները վաղուց ուղարկված են ռեկտորատ՝ հաստատման, և դրանք արդեն ամբողջովին պատրաստ են:

Ելույթ ունեցողն այնուհետև ներկաների ուշադրությունը հրավիրեց մի արատավոր ու անհանգստացնող փաստի վրա, այն է՝ հայ բանասիրության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Հովհաննես Եսայանը «Ոճագիտություն» առարկայի միջանկյալ քննությանը ներկայացել է ուսանողին անհարիր կեցվածքով, գուցեև հարբած և քննական տետրում իրեն առաջադրված հարցերի փոխարեն զանազան լուտանքներ ու հայհոյախառն արտահայտություններ է գրել համալսարանի և դասախոսների մասին:

Խնդիրը, իրոք, անհանգստացնող է ու կարոտ լուրջ քննարկման: Այդ առիթով հանգամանալից ելույթ ունեցավ հայոց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանը: Նա խայտառակություն համարեց տեղի ունեցած երևույթը. անհարմար համարելով ընթերցել ուսանողի գրավոր ամբողջ աշխատանքը՝ բավարարվեց սուսկ մի քանի պարբերությունների ընթերցմամբ ու մեկնաբանմամբ և պահանջեց Հովհաննես Եսայանին հեռացնել համալսարանից: Ի դեպ, նույն կարծիքը հայտնեցին նաև ներկաներից շատերը: Համաձայնելով, որ կատարվածն իրոք արտառոց է, գիտխորհուրդը, այնուամենայնիվ, որոշեց, որ հիշյալ ուսանողի հետ պետք է ունենալ մասնավոր զրույցներ, խորանալ երևույթի էության մեջ և այնուհետև վերջնական եզրահանգման գալ:

Գիտխորհուրդն այնուհետև անդրադարձավ օրակարգի **2-րդ հարցին**՝ լսելով մանկավարժության ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Ամբիոնի վարիչ պրոֆ. Ն. Հարությունյանը հետևյալ բաժանմամբ ներկայացրեց հաշվետվությունը.

«ԿՐԹԱԿԱՆ

Մանկավարժության ամբիոնն իրականացնում է մասնագիտական կրթական գործունեություն՝ երկու կրթական ծրագրերով. 1998թ-ից մագիստրատուրայում՝ «Կրթության կազմակերպում» կրթական ծրագիրը՝ առկա և հեռակա ուսուցմամբ և 2010թ-ից բակալավրիատում՝ «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագիրը՝ առկա ուսուցմամբ: Երկու բաժիններում սովորում են 242 ուսանող:

Գիտական

Ամբիոնը իրականացնում է արդյունավետ գիտական գործունեություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը հրատարակել է 1 մենագրություն, 16 գիտական հոդված, որից 1-ը Ռուսաստանում:

Ամբիոնն ունի 2 ասպիրանտ, 4 հայցորդ Հայաստանից և 1 ասպիրանտ՝ Իրանից: 2015թ-ի մայիսին մանկավարժության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ն.Հարությունյանը և դոցենտներ Ա. Ղազարյանը, Ա. Աշիկյանը մասնակցել են ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի կազմակերպած «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանաման-կավարժական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական հանրապետական գիտաժողովին:

2015-ի հունիսի 17-ին մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն. Հարությունյանը և դոցենտներ Ա. Ղազարյանը, Ա. Աշիկյանը մասնակցել են ՀՊՄՀ-ի

կազմակերպած <<Մանկավարժության արդի խնդիրները. Մարտահրավերներ և լուծումներ>> գիտաժողովին:

Ամբիոնի ասիստենտ Աննա Ալեքսանյանը դարձել է Կրթական հետազոտությունների Եվրոպական Ասոցիացիայի անդամ/EERA/:

2012-ից ֆակուլտետում գործում է գիտական աստիճաններ շնորհող մանկավարժության 065 մասնագիտական խորհուրդը: 2015թ հունվարից մինչև դեկտեմբեր խորհրդում կազմակերպվել է 10 թեկնածուական ատենախոսության պաշտպանություն:

2015-ին մանկավարժության ամբիոնի 2 ասպիրանտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Միջոցառումներ

2015-թ.-ի ապրիլի 22-ին մանկավարժության ամբիոնը կազմակերպել է 1915թ-ի եղեռնի զոհերի ոգեկոչման 100-ամյա տարելիցին նվիրված <<Մանկավարժները հիշում են և պահանջում>> միջոցառում, որին ներկա էին հյուրեր ԱՄՆ-ից և Գերմանիայից:

2015թ հոկտեմբերի 2-ին մանկավարժության ամբիոնը կազմակերպել է Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված ուսանողական մեծ միջոցառում՝ <<Ես սոցիալական մանկավարժ եմ>> խորագրով, որի ժամանակ տեղի է ունեցել Սոցիալական մանկավարժություն բաժնի 1-ին կուրսեցիների երդման արարողությունը:

Միջոցառմանը մասնակցում էր նաև Բեյրութի ազգային Աբգարյան վարժարանի տնօրեն տիկին Գեղանի Էթիմեզյանը:

2015-ի մայիսին մանկավարժության ամբիոնը մասնակցել է փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի կազմակերպած՝ <<Հոգեբանական վերնիսած>> էքսպո ցուցահանդես միջոցառմանը՝ հավուր պատշաճի ներկայացնելով մանկավարժության ամբիոնի գիտակրթական գործունեությունը:

Ուսանողական

Ամբիոնում 1921թ-ից գործում է Ուսանողական գիտական ընկերություն /ՈՒԳԸ/, որի կազմակերպած նիստերում 2015թ-ին ապրիլին և նոյեմբերին հետաքրքիր ելույթներով հանդես են եկել համալսարանի 14 ֆակուլտետների, Սոցիալա-

կան մանկավարժություն բաժնի ուսանողները և Կրթության կազմակերպում բաժնի մագիստրանտները՝ թվով 25 զեկուցում: Նրանցից լավագույնները պարգևատրվել են պատվոգրերով»:

Ելույթ ունեցողները՝ պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը և այլք, բարձր գնահատեցին պրոֆ. Ն. Հարությունյանի ծավալած գիտամանկավարժական բեղմնավոր ու ժրաջան գործունեությունը՝ այն համարելով նպատակասլաց և օրինակելի:

Սոցհարցումների արդյունքների առիթով ելույթ ունեցավ պրոֆ. Ավագյանը: Նա մանրամասնորեն ընթերցեց ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի սոցհարցումների արդյունքները և խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց 4 միավորից ցածր գնահատական ստացած դասախոսների վրա՝ հատուկ շեշտելով, որ զարմանալի մի օրինաչափությամբ այդ գնահատականներին են արժանանում միևնույն դասախոսները: Դեկանը համապատասխան ամբիոնի վարիչներին հանձնարարեց ի վերջո պարզել նիշերի ցածր լինելու պատճառներն ու խստորեն համապատասխան հետևություններ անել:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ ԵՊՀ-ի հայ նորագույն գրականության ամբիոնի պրոֆ., ք. գ. դ. Կիմ Աղաբեկյանի <<Հոդվածներ>> խորագրով ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և դոցենտ Ս. Գրիգորյանը:

Ելույթ ունեցողները մասնավորապես նկատեցին, որ ժողովածուն ընդգրկում է վերջին տասնամյակներում տարբեր թերթերում և հանդեսներում լույս տեսած հոդվածներ, ինչպես նաև գիտաժողովներում ընթերցված ուսումնասիրություններ: Դրանց մեծ մասը նվիրված է Ե. Չարենցի, Ա. Բակունցի և Հ. Օջականի ժառանգության քիչ ուսումնասիրված խնդիրներին: Հոդվածների այս ժողովածուն ունի գիտական անհրաժեշտ մակարդակ և օգտակար կարող է լինել ինչպես մասնագետների, այնպես էլ ուսանողների և հայ գրականությամբ հետաքրքրվող բոլոր ընթերցողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կիմ Աղաբեկյանի <<Հոդվածներ>> ժողովածուն երաշխավորել տպագրության և հրատարակելու հարցով միջնորդել համալսարանի հրատարակչության խորհրդին:

բ/ մանկավարժության մբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Թամարա Հարությունյանին՝ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոցենտ Գ. Բաբայանը:

Նշվեց, որ դոցենտ Թ. Հարությունյանը մանկավարժության ամբիոնում ունի դասախոսի բազմամյա փորձ /40 տարվա մանկավարժական ստաժ/, ղեկավարել է ամբիոնի 6 հայցորդի, ունի տպագրված 1 մենագրություն և 35 գիտական հոդված:

Վերոհիշյալ տվյալները բավարարում են ՀՀ ԲՈՀ-ի պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի դոցենտ Թամարա Հարությունյանին երաշխավորել՝ ղեկավարելու թեկնածուական ատենախոսություն:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհավորեց ներկաների գալիք Ամանորը, շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ